

Նշանների պատկերային տարրերի
միջազգային դասակարգումը հիմնադրող

Վիենայի համաձայնագիր

12 հունիսի, 1973թ., փոփոխել է 1985թ. հոկտեմբերի 1-ին

ՑԱՆԿ

Հոդված 1	Հատուկ միության ստեղծումը. միջազգային դասակարգման ընդունումը
Հոդված 2	Պատկերային տարրերի դասակարգման սահմանումը եւ ի պահ հանձնումը
Հոդված 3	Պատկերային տարրերի դասակարգման լեզուները
Հոդված 4	Պատկերային տարրերի դասակարգման օգտագործումը
Հոդված 5	Փորձագետների կոմիտեն
Հոդված 6	Ծանուցումը, ուժի մեջ մտնելը, փոփոխությունների եւ լրացումների հրապարակումը եւ այլ որոշումներ
Հոդված 7	Հատուկ միության ասամբլեան
Հոդված 8	Միջազգային բյուրոն
Հոդված 9	Ֆինանսները
Հոդված 10	Համաձայնագրի վերանայումը
Հոդված 11	Համաձայնագրի որոշ հոդվածներում ուղղումներ կատարելը
Հոդված 12	Համաձայնագրին մասնաից դառնալը
Հոդված 13	Համաձայնագրի ուժի մեջ մտնելը
Հոդված 14	Համաձայնագրի գործողության ժամկետը
Հոդված 15	Համաձայնագրի չեղյալ հայտարարումը
Հոդված 16	Վեճերի Քննարկումները
Հոդված 17	Ստորագրումը, լեզուները, ավանդապահի գործառույթները, ծանուցումները

Պայմանավորվող կողմերը՝

Հաշվի առնելով 1883թ-ի մարտի 20-ին ընդունված, 1900թ. դեկտեմբերի 14-ին՝ Բրյուսելում, 1911թ. հունիսի 2-ին՝ Վաշինգտոնում, 1925թ. նոյեմբերի 6-ին՝ Հաագայում, 1934թ. հունիսի 2-ին՝ Լոնդոնում, 1958թ. հոկտեմբերի 31-ին՝ Լիսաբոնում եւ 1967 հուլիսի 14-ին՝ Ստոկհոլմում վերանայված Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայի 19-րդ հոդվածը,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Հատուկ միության ստեղծումը. միջազգային դասակարգման ընդունումը

Երկրները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն համաձայնագիրը, կազմում են Հատուկ միություն եւ ընդունում են նշանների պատկերային տարրերի համար միասնական դասակարգում (այսուհետ՝ Պատկերային տարրերի դասակարգում):

Հոդված 2

Պատկերային տարրերի դասակարգման սահմանումը եւ ի պահ հանձնումը

(1) Պատկերային տարրերի դասակարգումը ներառում է դասերի, բաժինների եւ խմբերի ցանկ, որտեղ դասակարգվում են նշանների պատկերային տարրերը, հնարավոր է բացատրական նշումների հետ միասին:

(2) Պատկերային տարրերի դասակարգումը ներառված է մեկ բնօրինակի մեջ, անգլերեն եւ ֆրանսերեն լեզուներով, որը ստորագրված է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի կողմից (այսուհետ՝ «Գլխավոր տնօրեն» եւ «Կազմակերպություն») եւ ի պահ է հանձնվում նրան այն ժամանակ, երբ սույն Համաձայնագիրը բացվում է ստորագրման համար:

(3) 5(3)(i) հոդվածում նշված Փոփոխությունները եւ լրացումները, նույնպես ներառվում են Գլխավոր տնօրենի կողմից ստորագրված մեկ բնօրինակում՝ անգլերեն եւ ֆրանսերեն լեզուներով եւ ի պահ են հանձնվում նրան:

Հոդված 3

Պատկերային տարրերի դասակարգման լեզուները

(1) Պատկերային տարրերի դասակարգումը հաստատվում է անգլերեն եւ ֆրանսերեն լեզուներով, որի երկու տեքստերն էլ հավասարապես վավերական են:

(2) Կազմակերպության միջազգային բյուրոն (այսուհետ՝ «Միջազգային բյուրո») շահագրգիռ կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո մշակում է պատկերային տարրերի դասակարգման պաշտոնական տեքստերն այն լեզուներով, որոնք որոշում է 7-րդ հոդվածում նշված Ասամբլեան, նույն հոդվածի (2)(a)(vi) կետի համաձայն:

Հոդված 4

Պատկերային տարրերի դասակարգման օգտագործումը

(1) Հաշվի առնելով սույն Համաձայնագրով նախատեսված պարտավորությունները, Պատկերային տարրերի դասակարգումը Հատուկ միության յուրաքանչյուր երկրում ունի այն նշանակությունը, որը նրան տրվում է այդ երկրում: Մասնավորապես, Պատկերային տարրերի դասակարգումը չի պարտավորեցնում Հատուկ Միության երկրներին տվյալ նշանին տրված պահպանության ծավալի առումով:

(2) Հատուկ միության երկրների իրավասու գերատեսչությունները իրավունք ունեն Պատկերային տարրերի դասակարգումն օգտագործել որպես հիմնական կամ լրացուցիչ համակարգ:

(3) Հատուկ միության երկրների իրավասու գերատեսչությունները պաշտոնական փաստաթղթերում եւ նշանի գրանցման ու ժամկետի երկարաձգման մասին հրապարակումներում, որտեղ այդ նշանների պատկերային տարրերը զետեղվում են, ներառում են դասերի, բաժինների եւ խմբերի համարները

(4) Նշված համարներին նախորդում են «Պատկերային տարրերի դասակարգում» բառերը կամ դրանց հապավումը, որը որոշվում է 5-րդ հոդվածում նշված Փորձագետների կոմիտեի կողմից:

(5) Ցանկացած երկիր իր ստորագրելու կամ վավարագիրն ի պահ հանձնելու կամ միանալու պահից կարող է հայտարարել, որ նա չի պարտավորվում պաշտոնական փաստաթղթերում եւ նշանների գրացման ու ժամկետի երկարաձգման մասին հրապարակումներում ընդգրկել խմբերի բոլոր կամ որոշ համարները:

(6) Եթե Հատուկ միության որեւէ երկիր նշանների գրանցումը հանձնարարում է միջկառավարական իրավասու մարմնի, ապա նա ձեռնարկում է այդ մարմնի կողմից սույն հաղվածին համապատասխան Պատկերային տարրերի դասակարգման օգտագործումն ապահովող բոլոր հնարավոր միջոցները:

Հոդված 5 **Փորձագետների կոմիտեն**

(1) Հիմնադրվում է Փորձագետների կոմիտե, որում ներկայացված է Հատուկ Միության յուրաքանչյուր երկիր:

(2)(a) Գլխավոր տնօրենը կարող է եւ Փորձագետների կոմիտեի խնդրանքով՝ պարտավոր է Փորձագետների կոմիտեի նիստերին որպես դիտորդ ներկայացված լինելու համար հրավիրել այն երկրներին, որոնք Հատուկ միության անդամ չեն, բայց Կազմակերպության կամ արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայի անդամ են:

(b) Գլխավոր տնօրենը հրավիրում է ներկայացված լինելու Փորձագետների կոմիտեի նիստերին որպես դիտորդներ՝ նշանների բնագավառում մասնագիտացող միջկառավարական կազմակերպություններին, որոնց անդամ երկրներից առնվազն մեկը սույն Համաձայնագրի մասնակից է:

(c) Գլխավոր տնօրենը կարող է եւ Փորձագետների կոմիտեի խնդրանքով՝ պարտավոր է հրավիրել այլ միջկառավարական եւ միջազգային ոչ կառավարական կազմակերպություններին մասնակցելու իրենց հետաքրքրող քննարկումներին:

(3) Փորձագետների կոմիտեն՝

(I) ուղղումներ և լրացումներ է կատարում Պատկերային տարրերի դասակարգման մեջ.

(II) Հատուկ Միության երկրներին ուղարկում է հանձնարարականներ, որոնք հեշտացնում են Պատկերային տարրերի դասակարգման օգտագործումը ապահովում են դրա միատեսակ կիրառումը.

(III) ձեռնարկում է բոլոր այլ միջոցները, որոնք Հատուկ Միության կամ կազմակերպության բյուջեի համար չառաջացնելով ֆինանսական հետևանքներ, նպաստում են զարգացող երկրների կողմից Պատկերային Տարրերի Դասակարգման կիրառմանը.

(iv) Իրավասու է հիմնադրել ենթակոմիտեներ և աշխատանքային խմբեր.

(4) Փորձագետների կոմիտեն ընդունում է ընթացակարգի իր կանոնները: Վերջինիս հնարավորություն է տալիս 2(b) կետում նշված միջկառավարական կազմակերպություններին մասնակցելու Փորձագետների կոմիտեի ենթակոմիտեների և աշխատանքային խմբերի նիստերին, ինչը կարող է էապես նպաստել Պատկերային Տարրերի Դասակարգման կատարելագործմանը:

(5) Պատկերային տարրերի դասակարգման մեջ ուղղումներ և լրացումներ կատարելու հետ կապված առաջարկությունները կարող են կատարվել Հատուկ միության ցանկացած երկրի իրավասու գերատեսչության, Միջազգային Բյուրոյի, (2)(b) կետի համաձայն Փորձագետների կոմիտեում ներկայացված որեւէ միջկառավարական կազմակերպության և այդպիսի առաջարկություններ ներկայացնելու համար

Փորձագետների կոմիտեի կողմից հաստուկ հրավիրված ցանկացած այլ երկրի կամ կազմակերպության կողմից: Առաջարկություններն ուղարկվում են Միջազգային Բյուրո, որը դրանք փոխանցում է Փորձագետների կոմիտեի անդամներին ու դիտորդներին ոչ ուշ քան փորձագետների կոմիտեի նստաշրջանից երկու ամիս առաջ, որտեղ դրանք քննարկվելու են:

(6)(a) Փորձագետների կոմիտեի անդամ յուրաքանչյուր պետություն ունի մեկ ձայն:

(b) Փորձագետների կոմիտեի կողմից որոշումներ ընդունելու համար պահանջվում է ներկա գտնվող եվ քվեարկությանը մասնակցող երկրների պարզ մեծամասնությունը:

(c) Յուրաքանչյուր որոշում ընդունելու համար, որը ներկա եւ քվեարկությանը մասնակցած երկրների ձայների մեկ հինգերորդի կողմից գնահատվում է որպես Պատկերային տարրերի դասակարգման հիմնական կառուցվածքի փոփոխությանը հանգեցնող կամ վերադասակարգման զգալի աշխատանք պահանջող որոշում, պահանջվում է ներկա գտնվող եւ քննարկմանը մասնակցող երկրների ձայների երեք քառորդ մեծամասնություն:

(d) Ձեռնպահների ձայները հաշվի չեն առնվում:

Հոդված 6

Փոփոխությունների եւ լրացումների այլ որոշումների ծանուցումը ուժի մեջ մտնելը եւ հրապարակումը

(1) Պատկերային տարրերի դասակարգման փոփոխությունների և լրացումների, ինչպես նաև հանձնարարականների վերաբերյալ Փորձագետների կոմիտեի ընդունած յուրաքանչյուր որոշման մասին Միջազգային Բյուրոն ծանուցում է Հատուկ Միության երկրների իրավասու գերատեսչություններին: Ուղղումները և լրացումներն ուժի մեջ են մտնում ծանուցումն ուղարկելու թվականից 6 ամիս հետո:

(2) Միջազգային Բյուրոն Պատկերային Տարրերի Դասակարգման մեջ ներառում է ուժի մեջ մտած փոփոխությունները և լրացումները: Այդ փոփոխությունների և լրացումների մասին հաղորդումները հրապարակվում են 7-րդ հոդվածում հիշատակված Ասամբլեայի կողմից որոշված պարբերական հրատարակություններում:

Հոդված 7

Հատուկ միության Ասամբլեա

(1)(a) Հատուկ Միությունն ունի Ասամբլեա, որը բաղկացած է Հատուկ Միության երկրներից:

(b) Հատուկ Միության յուրաքանչյուր երկրի կառավարություն ներկայացված է մեկ պատվիրակով, որը կարող է ունենալ տեղակալներ, խորհրդականներ և փորձագետներ:

(c) Ասամբլեայի նիստերում, իսկ եթե Ասամբլեան որոշի՝ ապա նաև այնպիսի կոմիտեներում և աշխատանքային խմբերում, որոնք կարող են ստեղծվել Ասամբլեայի կողմից, 5(2)(b) հոդվածում հիշատակված ցանկացած միջկառավարական կազմակերպություն կարող է ներկայացված լինել դիտորդի կարգավիճակով:

(d) Յուրաքանչյուր պատվիրակականության ծախսերը կատարում է նրան նշանակված կառավարությունը:

(2)(a) Հաշվի առնելով 5-րդ հոդվածի դրույթները, Ասամբլեան.

(i) քննարկում է Հատուկ Միության պահպանմանն ու զարգացմանը և սույն Համաձայնագրի կիրառմանը վերաբերող բոլոր հարցերը.

(ii) վերանայման կոնֆերանսների նախապատրաստման հետ կապված ցուցումներ է տալիս Միջազգային Բյուրոյին.

(iii) քննարկում և հաստատում է Գլխավոր տնօրենի հաշվետվությունները և գործունեությունը, որոնք վերաբերում են Հատուկ միությանը, և Հատուկ միության իրավասության մեջ մտնող հարցերով նրան տալիս է բոլոր անհրաժեշտ հրահանգները.

(iv) որոշում է ծրագիրը և ընդունում է Հատուկ Միության երկամյա բյուջեն և հաստատում է նրա ֆինանսական հաշվետվությունները.

(v) հաստատում է Հատուկ Միության ֆինանսական կանոնակարգը.

(vi) որոշում է անզերենից և ֆրանսերենից բացի այլ լեզուներով Պատկերային տարրերի դասակարգման պաշտոնական տեքստերի ստեղծման հարցը.

(vii) ստեղծում է այնպիսի կոմիտեներ և աշխատանքային խմբեր, որոնք անհրաժեշտ է համարում Հատուկ Միության նպատակների իրականացման համար.

(viii) հաշվի առնելով (I)(c) կետի դրույթները, որոշում է, թե Հատուկ միության անդամ որ երկրներին և որ միջկառավարական և միջազգային ոչ կառավարական կազմակերպություններին է թույլատրվում դիտորդի կարգավիճակով մասնակցելու Ասամբլեայի, ինչպես նաև իր կողմից ստեղծած ցանկացած կոմիտեների և աշխատանքային խմբերի նիստերին.

(ix) համապատասխան, որոնք ուղղված են Հատուկ Միության նպատակներին հասնելու համար իրականացնում է ցանկացած այլ գործողություն.

(x) կատարում է սույն Համաձայնագրից բխող բոլոր այլ գործողությունները.

(b) Այն հարցերով, որոնք հետաքրքրություն են ներկայացնում նաև այլ Միությունների համար, որոնց վարչարարությունն իրականացնում է Կազմակերպությունը, Ասամբլեան որոշումներ ընդունում է՝ հաշվի առնելով Կազմակերպության Կոորդինացիայի կոմիտեի կարծիքը:

(3)(a) Ասամբլեայի անդամ յուրաքանչյուր պետություն ունի մեկ ձայն:

(b) Ասամբլեայի անդամ երկրների կեսը կազմում է քվորումը:

(c) Քվորումի բացակայության դեպքում Ասամբլեան կարող է ընդունել որոշում, սակայն Ասամբլեայի բոլոր այդպիսի որոշումները, բացառությամբ իր սեփական կանոններին վերաբերող որոշումների պարտադիր են, դառնում միայն հետևյալ պայմանները պահպանելու դեպքում: Միջազգային Բյուրոն այդպիսի որոշումներն ուղարկում է Ասամբլեայի այն անդամ երկրներին, որոնք ներկայացված չեն եղել և առաջարկում է որոշումներն ուղարկելու թվականից եռամսյա ժամկետում գրավոր հայտնել թե իրենք կողմ են քվեարկում, դեմ են, թե՛ ձեռնպահ: Եթե այդ ժամկետի ավարտին այդ եղանակով կողմ, դեմ կամ ձեռնպահ քվեարկած անդամների քանակը հասնի առնվազն այն քանակին, որը չէր բավականացնում տվյալ նստաշրջանում քվորում ունենալու համար, այդպիսի որոշումներն ուժի մեջ են մտնում, պայմանով, որ միաժամանակ պահպանված է անհրաժեշտ մեծամասնություն:

(d) Հաշվի առնելով 11(2) հոդվածի դրույթները, Ասամբլեայի որոշումներն ընդունվում են տրված ձայների երկու երրորդ մեծամասնությամբ:

(e) Ձեռնպահների ձայները հաշվի չեն առնվում:

(f) Պատվիրակը կարող է ներկայացնել միայն մեկ երկիր եւ քվեարկել միայն նրա անունից:

(4)(a) Ասամբլեան հրավիրվում է հերթական նստաշրջանի երկու տարին մեկ անգամ՝ Գլխավոր տնօրենի հրավերով, եւ, բացի բացառիկ դեպքերի, նույն ժամանակ եւ նույն տեղում, ինչ Կազմակերպության Գլխավոր Ասամբլեան:

(b) Ասամբլեան հրավիրվում է արտակարգ նստաշրջանի, որը հրավիրում է Գլխավոր տնօրենը Ասամբլեայի անդամ երկրների մեկ քառորդի պահանջով:

(c) Յուրաքանչյուր նստաշրջանի օրակարգը նախապատրաստում է Գլխավոր տնօրենը:

(5) Ասամբլեան ընդունում է ընթացակարգի իր կանոնները:

Հոդված 8

Միջազգային բյուրոն

(1)(a) Հատուկ Միության վարչական խնդիրներն իրականացվում են Միջազգային բյուրոյի կողմից:

(b) Միջազգային բյուրոն նախապատրաստում է, մասնավորապես, նիստերը եւ կատարում է ասամբլեայի, փորձագետների կոմիտեի եւ այնպիսի այլ կոմիտեների եւ աշխատանքային խմբերի քարտուղարության պարտականությունները, որոնք կարող են ստեղծվել ասամբլեայի կամ փորձագետների կոմիտեի կողմից:

(c) Գլխավոր տնօրենը հանդիսանում է Հատուկ Միության գլխավոր պաշտոնատար անձն է և ներկայացնում է Հատուկ Միությանը:

(2) Գլխավոր տնօրենը և նրա կողմից նշանակված աշխատակազմի ցանկացած անդամ առանց ձայնի իրավունքի մասնակցում են Ասամբլեայի, փորձագետների կոմիտեի և այնպիսի այլ կոմիտեների և աշխատանքային խմբերի բոլոր նիստերին, որոնք կարող են ստեղծվել Ասամբլեայի կամ փորձագետների կոմիտեի կողմից:

Գլխավոր տնօրենը կամ նրա կողմից նշանակված աշխատակազմի անդամը հանդիսանում են այդ մարմինների ex officio քարտուղարը:

(3)(a) Ասամբլեայի ցուցումներին համապատասխան Միջազգային Բյուրոն կազմակերպում է վերանայման կոնֆերանսներ:

(b) Վերանայման կոնֆերանսներին նախապատրաստվելու հարցերով Միջազգային Բյուրոն կարող է խորհրդակցել միջկառավարական և միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների հետ:

(c) Գլխավոր տնօրենը և նրա կողմից նշանակված անձինք վերանայման կոնֆերանսների քննարկումներին մասնակցում են առանց ձայնի իրավունքի:

(4) Միջազգային բյուրոն կատարում է իր վրա դրված ցանկացած այլ խնդիրներ:

Հոդված 9

Ֆինանսներ

(1)(a) Հատուկ Միությունն ունի բյուջե:

(b) Հատուկ Միության Բյուջեն ներառում է բուն Հատուկ Միության եկամուտները և ծախսերը, նրա վճարումները Միությունների ընդհանուր ծախսերի բյուջե, ինչպես նաև համապատասխան դեպքերում՝ հասկացումներ կազմակերպության Կոնֆերանսների բյուջեին:

(c) Միությունների համար ընդհանուր են համարվում այն ծախսերը, որոնք չեն վերաբերում բացառապես տվյալ Հատուկ միությանը, այլ միաժամանակ մեկ կամ մի քանի այլ միություններին, որոնց վարչարարությունն իրականացնում է Կազմակերպությունը: Այդ ընդհանուր ծախսերում Հատուկ միության մասնաբաժինը համապատասխանում է տվյալ ծախսերում նրա շահագրգռվածությանը:

(2) Հատուկ Միության Բյուջեն ստեղծվում է՝ պատշաճ ձևով հաշվի առնելով մյուս Միությունների բյուջեների հետ կոորդինացման պահանջները, որոնց վարչարարությունն իրականացնում է Կազմակերպությունը:

(3) Հատուկ միության բյուջեն ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

(i) Հատուկ միության երկրների վճարներից.

(ii) Հատուկ միությանը վերաբերող՝ Միջազգային բյուրոյի կողմից մատուցված ծառայությունների համար վճարներից եւ գանձույթներից.

(iii) Միջազգային բյուրոյի՝ Հատուկ Միությանը վերաբերող հրապարակումների վաճառքից կամ հոնորարներից.

(iv) նվիրատվություններից, կտակած միջոցներց և լրահատկացումներից.

(v) վարձավճարներից, տոկոսներից և այլ տարբեր եկամուտներից.

(4)(a) (3)(i) կետում նշված իր վճարը որոշելու համար Հատուկ Միության յուրաքանչյուր երկիր դասվում է այն նույն դասին, որին նա պատկանում է Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան միության մեջ և իր տարեկան վճարները մուծում է այն նույն միավորների թվի հիման վրա, որը այդ Միությունում հաստատվում է տվյալ դասի համար:

(b) Հատուկ Միության յուրաքանչյուր երկրի տարեկան վճարը հավասար է այն գումարին, որը հարաբերվում է բոլոր երկրների կողմից Հատուկ Միության բյուջե մուծման ենթակա վճարների ընդհանուր գումարին այնպես, ինչպես նրա միավորների քանակն է հարաբերվում վճարներ մուծող բոլոր երկրների միավորների ընդհանուր քանակին:

(c) Վճարները ենթակա են մուծման յուրաքանչյուր տարվա հունվարի մեկից:

(d) Այն երկիրը, որը վճարների մուծման պարտք ունի, Հատուկ միության բոլոր մարմիններում կորցնում է ձայնի իրավունքը, եթե նրա պարտքի գումարը հավասար է կամ գերազանցում է նախորդ երկու լրիվ տարիների համար մուծման ենթակա վճարների գումարին: Սակայն Հատուկ միության այդ մարմիններից ցանկացածը կարող է թույլատրել այդպիսի երկրին շարունակել օգտվել ձայնի իրավունքից այդ մարմնում, եթե եւ քանի դեռ նա համոզված է, որ վճարման ուշացումը կատարվել է բացառիկ եւ անխուսափելի պայմաններում:

(e) Այն դեպքում, երբ մինչեւ նոր ֆինանսական ժամանակաշրջանի սկիզբը բյուջեն ընդունված չէ, ֆինանսական կանոնակարգով նախատեսված կարգի համաձայն, գործում է նախորդ տարվա մակարդակի բյուջեն:

(5) Հատուկ միության անունից Միջազգային բյուրոյի կողմից մատուցված ծառայությունների համար գանձվող վճարների եւ գանձույթների չափը սամանվում է գլխավոր տնօրենի կողմից, որն այդ մասին զեկուցում է Ասամբլեային:

(6)(a) Հատուկ Միությունն ունի շրջանառու միջոցների ֆոնդ, որը բաղկացած է Հատուկ միության յուրաքանչյուր երկրի կողմից մուծվող միանվագ վճարներից: Եթե շրջանառու միջոցների ֆոնդը դատնում է ոչ բավարար, ապա Ասամբլեան որոշում է ընդունում դրա ավելացման մասին:

(b) Նշված ֆոնդում յուրաքանչյուր երկրի սկզբնական վճարի չափը կամ այդ ֆոնդի ավելացման նրա մասը համամասնական են այդ երկրի վճարին այն տարվա համար, երբ ստեղծվել է ֆոնդ կամ որոշում է ընդունվել դրա ավելացման մասին:

(c) Այդ համամասնությունը և վճարման պայմանները Գլխավոր տնօրենի առաջարկությամբ հաստատվում են Ասամբլեայի կողմից այն բանից հետո, երբ նա կլսի Կազմակերպության կոորդինացիայի կոմիտեի կարծիքը:

7(a) Կենտրոնական գրասենյակի մասին համաձայնագրում, որը կնքվում է այն երկրի հետ, որի տարածքում Կազմակերպությունն ունի իր կենտրոնական գրասենյակը, նախատեսվում է, որ, այն դեպքերում, երբ շրջանառու միջոցների ֆոնդը կդառնա ոչ

բավարար, այդ երկիրը կտրամադրի կանխավճար: Այդ կանխավճարների գումարը եւ տրամադրման պայմանները, յուրաքանչյուր դեպքում հանդիսանում են այդպիսի երկրի եւ Կազմակերպության միջեւ հատուկ համաձայնագրի առարկա:

(b) Ինչպես (a) ենթակետում նշված երկիրը, այնպես էլ Կազմակերպությունը իրավունք ունեն գրավոր ծանուցման միջոցով չեղյալ հայտարարել կանխավճարների տրամադրման մասին պարտավորությունը: Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում այն տարվա ավարտից երեք տարի անց, որում կատարվել է այդ ծանուցումը:

(8) Ֆինանսական վերստուգումն իրականացվում է ֆինանսական կանոնակարգի կանոնների համաձայն՝ Հատուկ միության մեկ կամ մի քանի երկրների, կամ դրանց համաձայնությամբ Ասամբլեայի կողմից նշանակված արտաքին վերստուգիչների կողմից:

Հոդված 10 Համաձայնագրի վերանայումը

(1) Սույն համաձայնագիրը ժամանակ առ ժամանակ կարող է վերանայվել Հատուկ Միության երկրների հատուկ կոնֆերանսի կողմից:

(2) Վերանայման ցանկացած կոնֆերանս գումարելու մասին որոշում ընդունվում է Ասամբլեայի կողմից:

(3) 7-րդ, 8-րդ, 9-րդ և 11-րդ հոդվածների ուղղումները կարող են ընդունվել կամ վերանայման կոնֆերանսում կամ՝ 11-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

Հոդված 11 Համաձայնագրի որոշ դրույթների ուղղումները

7-րդ, 8-րդ, 9-րդ հոդվածներում և սույն հոդվածում ուղղումները կատարելու վերբերյալ առաջարկություններ կարող են արվել Հատուկ Միության ցանկացած երկրի կամ Գլխավոր տնօրենի կողմից: Գլխավոր տնօրենն այդպիսի առաջարկություններն ուղարկում է Հատուկ Միության երկրներին՝ Ասամբլեայի կողմից դրանց քննարկումից առնվազն վեց ամիս առաջ:

(2) (1) կետում նախատեսված հոդվածների ցանկացած ուղղում ընդունվում է Ասամբլեայի կողմից, որի համար պահանջվում է տրված ձայների երեք քառորդ մեծամասնություն, սակայն 7-րդ հոդվածի և սույն կետի ցանկացած ուղղում ընդունվում է տրված ձայների չորս հինգերորդ մեծամասնությամբ:

(3)(a) (1) կետում նախատեսված հոդվածների ցանկացած ուղղում ուժի մեջ է մտնում այն բանից հետո մեկ ամիս անց, երբ դրա ընդունման մասին յուրաքանչյուր երկրի սահմանադրական ընթացակարգին համապատասխան գրավոր ծանուցումները, Գլխավոր տնօրենի կողմից ստացվել են ուղղումն ընդունելու պահին Հատուկ Միության անդամ հանդիսացող երկրների երեք քառորդից:

(b) Նշված հոդվածներում այդ ձևով ընդունված ցանկացած ուղղում պարտադիր է այն երկրների համար, որոնք ուղղումներն ուժի մեջ մտնելու պահին Հատուկ Միության անդամ են, սակայն ցանկացած ուղղում, որը ավելացնում է Հատուկ Միության երկրների ֆինանսական պարտավորությունները, պարտադիր է միայն այն երկրների համար, որոնք ծանուցել են իրենց կողմից այդպիսի ուղղումն ընդունելու մասին:

(c) (a) ենթակետի դրույթներին համապատասխան ընդունված ցանկացած ուղղում պարտադիր է բոլոր այն երկրների համար, որոնք Հատուկ միության անդամ են

դառնում (a) ենթակետի դրույթներին համապատասխան նշված ուղղումն ուժի մեջ մտելու թվականից հետո:

Հոդված 12

Համաձայնագրին մասնակցելու պայմանները

(I) Արդյունաբերական սեփականության պահպանության մասին փարիզյան կոնվենցիայի մասնակից ցանկացած երկիր կարող է դառնալ սույն համաձայնագրի մասնակից.

(i) Համաձայնագրին ստորագրելու այնուհետև վավերագիրն ի պահ հանձնելու կամ

(ii)) Վավերագիրը կամ միացման ակտերը Գլխավոր տնօրենին ի պահ հանձնելու միջոցով:

(2) վավերագիրը կամ միացման ակտերն ի պահ են հանձնվում Գլխավոր տնօրենին:

(3) Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան Կոնվենցիայի Ստոկհոլմյան ակտի 24-րդ հոդվածի դրույթները կիրառում են սույն համաձայնագրի նկատմամբ:

(4) (3) կետը ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվի որպես Հատուկ Միության որևէ երկրի կողմից այն տարածքի վերաբերյալ փաստացի իրավիճակի ճանաչում կամ լռելյայն ընդունում, որի նկատմամբ, նշված կետի համաձայն, սույն համաձայնագիրը կիրառվում է այլ երկրի կոմից:

Հոդված 13

Համաձայնագրի ուժի մեջ մտնելը

(i) Առաջին հինգ երկրների կողմից վավերագրերը կամ միացման ակտերն ի պահ են հանձնելու դեպքում սույն համաձայնագրին ուժի մեջ է մտնում հինգերորդ վավերագիրը կամ միացման ակտն ի պահ են հանձնելուց երեք ամիս անց:

(2) Ցանկացած երկրի նկատմամբ, բացառությամբ այն երկրների, որոնց նկատմամբ սույն համաձայնագրին ուժի մեջ է մտել (1) կետի համաձայն, համաձայնագրին ուժի մեջ է մտնում այն թվականից երեք ամիս հետո, երբ Գլխավոր տնօրենի կողմից ծանուցվել է դրա վավերացման կամ միացման մասին, եթե վավերագրում կամ միացման ակտում նշված չի եղել ավելի ուշ թվական: Վերջինիս դեպքում սույն համաձայնագրին այդ երկրի նկատմամբ ուժի մեջ է մտնում նշված թվականին:

(3) Վավերացումը կամ միացումը ինքնաբերաբար հանգեցնում է սույն համաձայնագրով սահմանված բոլոր դրույթների ընդունմանը եւ բոլոր առավելությունների ստացմանը:

Հոդված 14

Համաձայնագրի գործողության ժամկետը

Սույն համաձայնագրին ունի գործողության նույն ժամկետը, ինչ Արդյունաբերական Սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիան:

Հոդված 15

Չեղյալ հայտարարելը

(1) Հատուկ միության ցանկացած երկիր կարող է չեղյալ հայտարարել սույն համաձայնագիրը՝ Գլխավոր տնօրենին ծանուցում ուղարկելու միջոցով:

(2) Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում Գլխավոր տնօրենի կողմից ծանուցում ստանալու օրվանից մեկ տարի հետո:

(3) Սույն հոդվածով նախատեսված չեղյալ հայտարարելու իրավունքը որևէ երկրի կողմից չի կարող օգտագործվել մինչև այն թվականից հինգ տարին լրանալը, երբ նա դարձել է Հատուկ Միության անդամ:

Հոդված 16

Վեճեր

(1) Հատուկ Միության երկու կամ ավելի երկրների միջև ծագած սույն համաձայնագրի կիրառմանը եւ մեկնաբանմանը վերաբերող բանակցությունների միջոցով չկարգավորված ցանկացած վեճ, նշված երկրներից որևէ մեկի կողմից, դիմումի միջոցով, կարող է փոխադրվել միջազգային դատարան՝ դատարանի կարգավիճակին համապատասխան, եթե միայն նշված երկրները համաձայնության չեն եկել այլ եղանակով վեճ կարգավորելու հարցում: Վեճը դատարան փոխադրող երկիրը այդ մասին տեղեկացնում է միջազգային Բյուրոյին: Միջազգային Բյուրոն այդ մասին տեղեկացնում է Հատուկ Միության մնացած երկրներին:

(2) Սույն համաձայնագն ստորագրելու կամ վավերագրը կամ միացման ակտն ի պահ հանձնելիս յուրաքանչյուր երկիր կարող է հայտարարել, որ իր վրա չեն տարածվում (1) կետի դրույթները: Այդպիսի երկրի եվ Հատուկ Միության որևէ այլ երկրի միջև ծագած վեճերի դեպքում (1) կետի դրույթները չեն կիրառվում:

(3) Ցանկացած երկիր, որը հայտարարություն է արել (2) կետի դրույթների համաձայն, ցանկացած ժամանակ կարող է չեղյալ համարել իր հայտարարությունը՝ գլխավոր տնօրենին ողարկված ծանուցման միջոցով:

Հոդված 17

Ստորագրումը, լեզուները, ավանդապահի գործառույթները, ծանուցումները

(1)(a) Սույն Համաձայնագիրն ստորագրվում է մեկ օրինակ՝ անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարապես վավերական են:

(b) Սույն համաձայնագիրն ստորագրման համար բաց է Վիեննայում մինչև 1973 թվականի դեկտեմբերի 31-ը:

(c) Սույն Համաձայնագրի բնօրինակը ի պահ է տրվում Գլխավոր տնօրենին այն բանից հետո, երբ դա այլևս բաց չէ ստորագրման համար:

(2) Պաշտոնական տեքստերը մշակվում են Գլխավոր տնօրենի կողմից՝ շահագրգիռ կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո, այն լեզուներով, որոնք կորոշի Ասամբլեան:

(3)(a) Գլխավոր տնօրենը իր կողմից վավերացված սույն համաձայնագրի նշված տեքստերի երկու պատճեններն ուղարկում է այն երկրների կառավարություններին, որոնք դա ստորագրել են, և ըստ հարցման՝ ցանկացած այլ երկրի կառավարությանը:

(b) Գլխավոր տնօրենը սույն համաձայնագրի իր կողմից վավերացված ցանկացած ուղղման երկու պատճեններն ուղարկում է Հատուկ Միության բոլոր

երկրների կառավարություններին և ըստ հարցման՝ ջ ցանկացած այլ երկրի կառավարությանը:

(c) Գլխավոր տնօրենը սույն Համաձայնագիրն ստորագրած կամ դրան միացած ցանկացած երկրի կառավարության հարցման հիման վրա տրամադրում է իր կողմից վավերացված Պատկերային տարրերի դասակարգման երկու պատճեններ՝ անգլերեն կամ ֆրանսերեն լեզուներով:

(4) Գլխավոր տնօրենը սույն համաձայնագիրը գրանցում է Միացյալ Ազգերի Կազմակերպության Քարտուղարությունում:

(5) Գլխավոր տնօրենը Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվեցիայի մասնակից բոլոր երկրների կառավարություններին ծանուցում է.

(i) (1) կետին համապատասխան ստորագրումների մասին.

(ii) 12(2) հոդվածի համաձայն վավերագրերը կամ միացման մասին ակտերն ի պահ հանձնելու մասին.

(iii) 13(1) հոդվածի համաձայն սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու թվականի մասին.

(iv) 4(5) հոդվածի համաձայն ներկայացված հայտարարագրերի մասին.

(v) 12(3) հոդվածի համաձայն արված ծանուցումների և հայտարարությունների մասին.

(vi) 16(2) հոդվածի համաձայն արված հայտարարությունների մասին.

(vii) 16(3) հոդվածի համաձայն չեղյալ հայտարարելու վերաբերյալ ստացված ծանուցումների մասին.

(viii) 11(3) հոդվածի համաձայն սույն համաձայնագրի փոփոխությունների ընդունում մասին.

(ix) այդպիսի փոփոխությունների ուժի մեջ մտնելու թվականի մասին.

(x) 15-րդ հոդվածի համաձայն չեղյալ հայտարարելու վերաբերյալ ստացված ծանուցումների մասին: